ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **«23» դեկտեմբերի 2025 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N 3-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2025 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 9:00-ին և ավարտվել՝ ժամը 17:00-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյան – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյան – Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ա. Ավետյան – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Օ. Աբրահամյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Սիրունյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Բաղդասարյան – «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ

Բ. Փափազյան – «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան – «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան – «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեսչական մարմնի ստորաբաժանումների հաստիքացուցակներում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն հավանություն տալու մասին:
2. Տեսչական մարմնի 2025 թվականի բյուջեում ներքին հոդվածային վերաբաշխում կատարելուն հավանություն տալու մասին:

Օրակարգային հարցերի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ա. Ավետյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Օ. Աբրահամյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Վ. Սիրունյանը օրակարգի 1-ին հարցին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Բաղդասարյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Բ. Փափազյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
8. Ա. Բախշյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
9. Ա. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝
Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ՝ 9 «կողմ»,
Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ 8 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 9 անդամներից օրակարգի առաջին հարցին «կողմ» են քվեարկել բոլոր 9 անդամները, իսկ երկրորդ հարցին «կողմ» է քվեարկել 8 անդամ:

Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Տեսչական մարմնի ստորաբաժանումների հաստիքացուցակներում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն:

2. Հավանություն տալ Տեսչական մարմնի 2025 թվականի բյուջեում ներքին հոդվածային վերաբաշխում կատարելուն:

12/26/2025

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն